

**ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՒԴԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԱՐՎԵՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ) ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱԶՄՎԱԾ
ԲԱԿԱԼԱՎՐԱԿԱՆ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ
ՆՈՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՆԱԶԵՆԻ ՂԱՐԻԲՅԱՆ

Արվեստի պատմության դոկտոր (Փարիզ)

ՀԳՊԱ դոցենտ,

Մալենադարանի ավագ գիտաշխատող

Համառոտ

Հոդվածն ամփոփում է 2013թ. Գեղարվեստի ակադեմիայի արվեստաբանական բաժնի համար առաջարկված և 2014 թվականից ներդրված նոր կրթական ծրագրերի մեթոդաբանությունը, հայեցակարգային սկզբունքները և առարկայական ցանկը՝ Բակալավրական և Մագիստրոսական մասնագիտական կրթության համար: Ծրագրերը հեղինակային են և մշակվել են Գեղարվեստի ամբիոնի դոցենտներ Նազենի Ղարիբյանի և Վարդան Ազատյանի կողմից: Դրանք համապատասխանում են Կրեդիտային համակարգով սահմանված Մասնագետի որակավորման նոր պահանջներին և Բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներին, նպատակ ունեն համարժեք կերպով արձագանքել բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստության առջև ծառայած նոր մարտահրավերներին և միջազգային աշխատաշուկայում մրցունակության ապահովման խնդիրներին: Ծրագրի մշակման ընթացքում հաշվի են առնված արվեստի պատմության և տեսության ոլորտում միջազգայնորեն ճանաչված սկզբունքները, տարբեր համալսարանների ծրագրերի համեմատական ուսումնասիրությունը, Գեղարվեստի ակադեմիայի մասնագետ դասախոսների փորձառությունը, ինչպես նաև նոր ծրագրի հեղինակների միջազգային դասախոսական փորձը:

Առանցքային բառեր. *բակալավրիատ, մագիստրատուրա, մասնագիտական կրթական ծրագիր, արվեստաբանություն, արվեստի պատմություն և տեսություն:*

Հայաստանում արվեստաբանի մասնագիտությամբ բարձրագույն ուսումնական ծրագիրն առաջին անգամ ներդրվել է 1983 թվականին, ներկայիս Գեղարվեստի պետական ակադեմիայի (այնժամ՝ Գեղարվեստաթատերական ինստիտուտ) կերպարվեստի ֆակուլտետում, Արվեստի պատմության և տեսության ամբիոնի հովանու ներքո¹: Մինչ այդ հայ արվեստաբանները հարկավոր կրթությունը ձեռք էին բերում Լենինգրադի պետական համալսարանի համապատասխան ֆակուլտետում: Ըստ ԽՍՀՄ հանրակրթական հաստատությունների համար հաստատված համընդհանուր կանոնների՝ հայկական արվեստաբանական բաժնի համար որպես պարտադիր ծրագիր ընդունվեց Լենինգրադի ֆակուլտետի հնգամյա ծրագիրը՝ համապատասխան հայկական նյութի հավելմամբ:

ԽՍՀՄ փլուզումից և Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո, տարիների ընթացքում, այդ ծրագրում որոշ շոշափելի փոփոխություններ էին կատարվել, որոնք, սակայն, մասնակի և անհատականացված բնույթ ունեին և չէին ենթարկվում որևէ համակարգված հայեցակարգի: Հայաստանի բուհական համակարգի՝ Բոլոնիայի գործընթացներին մասնակից դառնալը նոր մարտահրավերներ և պահանջներ առաջադրեց բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստության և միջազգային աշխատաշուկայում մրցունակության ապահովման առումով: Բայց, հատկապես՝ Գեղարվեստի ակադեմիայի՝ տարբեր միջազգային ծրագրերին ակտիվորեն ներգրավվելու և աշխարհի տարբեր համալսարանների հետ համագործակցելու ռազմավարական առաջնահերթության սահմանման արդյունքում ակնհայտ դարձավ, որ ի թիվս այլ բաժինների, նաև արվեստաբանական բաժնի կրթական ծրագիրը կարիք ունի արմատական փոփոխության:

Ըստ ԽՍՀՄ հանրակրթական հաստատությունների համար հաստատված համընդհանուր կանոնների՝ հայկական արվեստաբանական բաժնի համար որպես պարտադիր ծրագիր

1. Հոդվածի հեղինակն այդ բաժնի առաջին տարվա շրջանավարտներից է (1983-1988):

ընդունվեց Լենինգրադի ֆակուլտետի հնգամյա ծրագիրը՝ համապատասխան հայկական նյութի հավելմամբ:

Ըստ այդմ, 2013 թվականին արվեստագիտության թեկնածու, ՀԳՊԱ դոցենտ Վարդան Ազատյանի հետ միասին առաջարկեցինք Ակադեմիայի ղեկավարությանը՝ մշակել նոր, հեղինակային ծրագիր, որ հիմնված կլինի հստակ ձևակերպված հայեցակարգի և գիտելիքի համակարգված ուսուցման սկզբունքի վրա:

Ծրագիրը կազմվել է՝ հաշվի առնելով Կրեդիտային համակարգով սահմանված մասնագետի որակավորման նոր պահանջները, Բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները, Որակի ապահովման ազգային կենտրոնի դիտողությունները, համալսարանական կրթության, մասնավորապես՝ արվեստի պատմության և տեսության ոլորտում միջազգայնորեն ճանաչված սկզբունքները և տարբեր համալսարանների ծրագրերի համեմատական ուսումնասիրությունը: Նկատի են առնվել նաև Գեղարվեստի ակադեմիայի Արվեստի պատմության և տեսության ամբիոնի դասախոսների անհատական մասնագիտական փորձառությունը և նոր ծրագրի հեղինակների անձնական միջազգային դասախոսական փորձը:

Մշակման ավարտին Ծրագիրը դրվել է քննարկման՝ Արվեստի պատմության և տեսության ամբիոնի դասախոսների մասնակցությամբ: Որոշ խմբագրումներից հետո այն ընդունվել է Ակադեմիայի գիտխորհրդի կողմից և որպես փորձական ծրագիր ներդրվել է 2014 թվականից: Ընթացիկ տարիներին ևս որոշ փոփոխություններ են կատարվել ծրագրում, որոնք շարունակվում են մինչև այժմ:

Նշենք, որ ստորև ներկայացվող առարկայացանկում ներկայացված են նաև Կրթության և գիտության նախարարության կողմից այն ժամանակ հաստատված պարտադիր հանրակրթական առարկաները, ինչպես՝ Հայոց լեզու, Հայոց պատմություն, Քաղաշտպանություն, Հետազոտության հիմունքներ և

այլն, որոնք ըստ պատշաճի ընդգրկվում են առարկայական և ժամաքանակային ցանկի մեջ: Ընդ որում, ժամանակին հատուկ առաջարկ է արվել հումանիտար առարկաների դասախոսներին՝ իրենց դասընթացները պատրաստել արվեստի պատմությանն առնչվող նյութերի լայն ընդգրկմամբ:

Բակալավրական (ԲԱԿ) ծրագրի մեթոդաբանությունը և հայեցակարգային հիմնավորումը

Արվեստի պատմության և տեսության բաժնի ԲԱԿ քառամյա ծրագիրը կազմվել է եռակարգ հիմքով և երկփուլ սկզբունքով:

Այսպես, այն բաժանված է ուսուցանվող առարկաների երեք կրթաբլոկների.

- ա.** մասնագիտական առարկաներ,
- բ.** մասնագիտական օժանդակ առարկաներ,
- գ.** հումանիտար-հանրակրթական առարկաներ:

Մասնագիտական առարկաներն իրենց հերթին բաժանվում են երկու՝ ընդհանուր և հատուկ ենթախմբերի: Կրթաբլոկների և ենթախմբերի միջև պահպանված է հստակ և տրամաբանական հավասարակշռություն՝ թե՛ ժամաքանակի, թե՛ բովանդակային և թե՛ ժամանակաշրջանի համապատասխանության առումով: Օրինակ, Արվեստի պատմության Հին աշխարհի շրջանին համապատասխանում են ճարտարապետության և աշխարհայացքների պատմության նույն շրջանները: Մասնագիտական առարկաներին տրված է առավելագույն ծավալով ժամաքանակ, որ պահպանվում է անփոփոխ բոլոր կիսամյակների և թեմատիկ-ժամանակաշրջանային բաժանումների համար: Այսպես, նույն կիսամյակի կտրվածքով Արվեստի պատմությանը հատկացված է 96 ժամ, ճարտարապետության պատմությանը՝ 64 ժ., Հայ արվեստի և հայ ճարտարապետության պատմություններին՝ 32-ական ժամ: Մասնագիտական օժանդակ առարկաները կարևոր են, որովհետև կոչված են ընդլայնելու և համատեքստավորելու

արվեստի պատմության գիտելիքը: Ուստի դրանց մեծ մասին հատկացված է 64-ական ժամ: Հատուկ ուշադրություն է դարձված օտար լեզուների ուսուցման վրա, որ արվեստաբանի համար առաջնային մասնագիտական անհրաժեշտություն է:

Ծրագրի վերոնշյալ երկու փուլերն են.

- ա.** արվեստի պատմության ընդհանուր դասընթաց,
- բ.** արվեստի պատմության և տեսության, արվեստի քննադատության խորացված դասընթաց:

Փուլերից յուրաքանչյուրի տևողությունը երկու տարի է: Առաջին փուլը (I-IV կիսամյակ) ներառում է համաշխարհային և հայ արվեստի պատմության դասավանդումը՝ նախապատմական ժամանակներից մինչև ժամանակակից շրջան: Փուլի ավարտին ուսանողը պետք է տիրապետի համաշխարհային և հայ արվեստի պատմության ընդհանուր գիտելիքներին՝ յուրաքանչյուր առարկայի դասընթացը ավարտելով համապատասխան քննությամբ:

Երկրորդ փուլը ներառում է արվեստաբանության մասնագիտացված դասավանդում՝ արվեստի պատմության թեմատիկ բաժանմամբ և տեսական-վերլուծական ուղղվածությամբ: Փուլի ավարտին ուսանողը պետք է տիրապետի տեսական գիտելիքների և ստեղծագործությունները լիարժեք վերլուծելու հմտություններին: Այս փուլում, բացի քննադատական և տեսական առարկաների խորացված դասավանդումից, մասնագիտական գործնական աշխատանքից և մասնագիտության պատմությունից, նախատեսված է նաև Մասնագիտական թեմատիկ դասընթացներ ընդհանուր վերտառությամբ առարկան, որի ընթացքում դասախոսները դասավանդումն անցկացնում են՝ ըստ իրենց մասնագիտացման և ըստ իրենց ընթացիկ գիտական աշխատանքի: Դասավանդվող նյութի բովանդակային անվանումը առաջարկում են դասախոսները. այն կարող է փոփոխվել տարեցտարի՝ դասախոսների հայեցողությամբ և հատկապես նրանց հետազոտական ընթացիկ

թեմայի փոփոխությանը զուգահեռ: Այս դասընթացի հիմնական նպատակն է դասախոսների գիտական աշխատանքը ուսումնասիրության հետ զուգորդելը, ինչպես նաև ուսանողների՝ կատարվող ընթացիկ հետազոտությունների հետ հաղորդակցվելն ու գիտական վերջին նորություններին ծանոթանալը, ինչն ավելի կրարձրացնի թե նրանց, թե բուհի մասնագիտական մրցունակությունը:

Ուսումնասիրության երեք տարիների ընթացքում ուսանողները պետք է կատարեն ինքնուրույն հետազոտական աշխատանք, որին ներկայացվող պահանջները աստիճանաբար բարդանում են՝ ռեֆերատից մինչև կուրսային աշխատանք: Բացի այդ, սահմանված է նաև ամառային ուսումնական պրակտիկա, որի շրջանակները համապատասխանում են տվյալ տարվա ընթացքում ձեռք բերած գիտելիքների բովանդակությանը (առաջին տարվա ավարտին՝ հնագիտական պեղումներին մասնակցություն, երկրորդ տարվա ավարտին՝ պրակտիկա Մատենադարանում և Հայաստանի պատմության թանգարանում, երրորդ տարվա ավարտին՝ Ազգային պատկերասրահում և Ազգային արխիվում):

Նոր ծրագրի համար որդեգրած սկզբունքների և մեթոդաբանության թելադրանքով՝ առաջարկվել են նոր առարկաներ, ինչպես, օրինակ, Ստեղծագործության վերլուծություն, Աշխարհայացքների պատմություն, Ճարտարապետության տեսություն, Կինոգիտություն, Գրականագիտություն, Հայ արխիվի պատմություն և այլն: Որոշ առարկաներ անվանափոխված են՝ ենթադրելով բովանդակային կամ առանցքային փոփոխություններ, ինչպես, օրինակ՝ Թատրոնի և Երաժշտության պատմությունները, որ դարձել են Թատերագիտություն և Երաժշտագիտություն. վերջինների դասավանդման ընթացքում ուսանողը պետք է ծանոթանա ոչ միայն նյութի պատմությանը, այլ նաև վերլուծական մեթոդներին և գործիքներին: Նույնը վերաբերում է Հնագիտության հիմունքներ առարկային, որ նախկինում դասավանդվում էր առաջին կիսամյակում, իսկ այժմ

դարձել է Հնագիտություն և տեղափոխվել ծրագրի երկրորդ փուլ:

Նախկին ծրագրում տեղ գտած որոշ զուգահեռ առարկաներ համատեղվել են մեկ առարկայի ներքո, ինչպես, օրինակ, Հնագույն և հին շրջանի արտասահմանյան արվեստը և Հին Արևելքի արվեստը, որոնք միավորված են Արվեստի պատմություն ընդհանուր առարկայի «Հին շրջանի արվեստի» դասընթացի մեջ՝ ներառելով Նախնադարը, Հին Աշխարհը և Անտիկ դասական շրջանը: Նույնկերպ ենք վարվել նաև Բարոկկոյի և ռոկոկոյի շրջանի ճարտարապետությունը և Նոր դասական ճարտարապետությունը առարկաների հետ, որոնք միավորված են Նոր ժամանակների ճարտարապետության պատմություն դասընթացի ներքո՝ ներառելով Վերածննդի շրջանից մինչև XVIII դարը: Արվեստի պատմության քրիստոնյա միջնադարյան շրջանը բաժանված է Արևելաքրիստոնեական և Արևմտաքրիստոնեական հատվածների, որոնք դասավանդվում են առանձին մասնագետների կողմից: Արևելաքրիստոնեականի մեջ է մտնում Բյուզանդական արվեստը, իսկ ռուս արվեստի միջնադարյան շրջանը դասավանդվում է Բյուզանդական արվեստի դասընթացի սահմաններում:

Թեթևակի ուղղումներ են արված արվեստի պատմության ժամանակաշրջանների բաշխման առումով՝ այն համապատասխանեցնելով ժամանակաշրջանային և աշխարհագրական՝ միջազգայնորեն ընդունված դասակարգումներին, իսկ հայ արվեստի պատմության ժամանակագրական բաշխումը՝ գիտականորեն ճանաչված պատմա-մշակութային փուլերին:

Ելնելով ուսումնառության նոր բովանդակությունից՝ առաջարկել ենք Արվեստի պատմություն ավարտական պետական քննությունը փոխարինել Ստեղծագործության վերլուծություն քննությամբ, որտեղ ապագա արվեստաբան ուսանողը գործնականում կցուցաբերի պատմական և տեսական գիտելիքների իմացություն և քննադատաբար մտածելու կարողություն: Այսպիսով, դիպլոմային գրավոր աշխատանքին զուգահեռ, որ-

տեղ դրսևորվում են ուսանողի՝ հետազոտություն իրականացնելու հմտությունները, բանավոր կրացահայտվեն ուսման ամբողջ տևողության ընթացքում ձեռք բերած նրա գիտելիքները և վերլուծական կարողությունները:

Մագիստրոսական (ՄԱԳ) ծրագրի մեթոդաբանությունը և հայեցակարգային հիմնավորումը

Արվեստի պատմության և տեսության բաժնի ՄԱԳ երկամյա ծրագիրը կազմվել է եռափուլ սկզբունքով, որի տրամաբանական հիմքը ուսումնառության հետազոտական ուղղվածությունն է և հմտությունների ձեռքբերման համակարգված, աստիճանական խորացումը:

Առաջին փուլում (I կիսամյակ) համախմբված առարկաները նպատակ ունեն ուսանողներին ներկայացնել արվեստաբանության ոլորտի խնդիրները և ներկա վիճակը: Երկրորդ փուլը (II կիսամյակ) բնորոշվում է դիսցիպլինար գիտելիքի և հմտությունների փոխանցման գերակշռությամբ, իսկ երրորդ փուլը (III կիսամյակ) շեշտադրում է մասնագիտական և հետազոտական գործիքների հետ ծանոթությունը:

Ըստ այսմ, բացի առարկաների դասացուցակային վերաբաշխումից և դասընթացների ծավալային հավասարակշռումից, ծրագրում առաջարկված են միջարքնոր առարկաներ և թեմաներ, ինչպես օրինակ, Աղբյուրագիտություն, Հայագիտության ներածություն, Ժամանակակից արվեստաբանության խնդիրներ, Հայ եկեղեցիների տիպաբանություն, Հուշարձանների պահպանության խնդիրները Հայաստանում, Արվեստագետներ և արվեստի միջավայր, Ինֆորմատիկա՝ առցանց գիտական ռեսուրսների օգտագործում, և այլն: Որոշ առարկաներ էլ միավորված են կամ անվանափոխված՝ ենթադրելով բովանդակային վերուղղվածություն:

Այս ամենով հանդերձ, երկու՝ ԲԱԿ և ՄԱԳ ծրագրերի դեպքում էլ հնարավորինս փորձ է արվել պահպանել դասախոսների

հաստատված աշխատանքային ծանրաբեռնվածությունը, միաժամանակ, նրանց համար հնարավորություն ստեղծել դասավանդման ընթացքում լիարժեք կիրառել իրենց մասնագիտական գիտելիքները, փորձը և հետազոտական վերջին ձեռքբերումները:

Կարևոր է նաև նշել, որ ԲԱԿ Դիպլոմային աշխատանքի և ՄԱԳ ավարտական թեզի թեմաները ըստ ներկայացվող ծրագրի պետք է ընտրվեն համապատասխանաբար վեցերորդ և երկրորդ կիսամյակների ավարտին, որպեսզի ուսանողները բավարար ժամանակ ունենան պատրաստվելու և գրավոր աշխատանքը հավուր պատշաճի ներկայացնելու պաշտպանության¹:

Անցած վեց տարիների ընթացքում այս ծրագրերը հաջողությամբ անցել են փորձաշրջանը և կարող են ձեռք բերել համակարգված գիտելիքով ուսումնառության ինքնատիպ օրինակի քաղաքացիություն: Ծրագրերի համապատասխանելիության և համարժեքության գրավականը այս տարիներին ուսանողների գրանցած վերջնադրյուններն են, ավարտական աշխատանքների թեմաների և հետազոտական խնդիրների որակական փոփոխությունը, որ արձանագրվել է մասնագիտական հանձնաժողովների կողմից, և այդ աշխատանքների փայլուն պաշտպանությունները:

1. ԲԱԿ և ՄԱԳ ավարտական աշխատանքների համար հատուկ մշակված հեղինակային Ուղեցույցը կիրառարակվի Տարեգրքի հաջորդ համարում:

Բակալավրական ծրագրի առարկայացանկն ըստ եռակարգ կրթաբլոկների

Մասնագիտական ընդհանուր առարկաներ

- Արվեստաբանության ներածություն:
- Արվեստի պատմություն I (Հին աշխարհ):
- Ճարտարապետության պատմություն I:
- Արվեստի պատմություն II
(Քրիստոնյա միջնադար IV-XIV դդ.):
- Ճարտարապետության պատմություն II:
- Արվեստի պատմություն III
(Նոր ժամանակներ XV-XIX դդ.):
- Ճարտարապետության պատմություն III:
- Արվեստի պատմություն IV
(Արդի և ժամանակակից շրջան – XX-XXI դդ.):
- Ճարտարապետության պատմություն IV:
- Հայ արվեստի պատմություն I
(Հնագույն և հին շրջան Ք. ծ. ա III հազ. – Ք. ծ. III դ.):
- Հայ ճարտարապետության պատմություն I:
- Հայ արվեստի պատմություն II
(IV-XI դդ. - Վաղքրիստոնեական և վաղմիջնադարյան կամ Թագավորությունների շրջան):
- Հայ ճարտարապետության պատմություն II:
- Հայ արվեստի պատմություն III
(XII-XVIII դդ. - Կիլիկյան թագավորության և ուշմիջնադարյան շրջաններ):
- Հայ ճարտարապետության պատմություն III:
- Հայ արվեստի պատմություն IV
(XIX-XX դդ. - Նոր և խորհրդային շրջան):
- Հայ ճարտարապետության պատմություն IV:
- Մահմեդական աշխարհի արվեստ և ճարտարապետություն (VII-XVIII դդ.):

- Հեռավոր Արևելքի արվեստ և ճարտարապետություն (Հին շրջանից մինչև XVIII դ.):
- Ամերիկայի և Աֆրիկայի արվեստ և ճարտարապետություն (Մինչգաղութային շրջան):
- Ռուս արվեստի պատմություն (XVIII-XX դդ. – կայսերական և խորհրդային շրջաններ):
- Հայ գաղթօջախների մշակույթի պատմություն (XIV-XIX դդ.):

Մասնագիտական հատուկ առարկաներ

- Արվեստաբանության պատմություն I (մինչև XIX դ.):
- Արվեստաբանության պատմություն II (XIX-XX դդ.):
- Արվեստի քննադատություն:
- Ստեղծագործության վերլուծություն:
- Գիտահետազոտության ներածություն:
- Հնագիտություն:
- Ճարտարապետության տեսություն:
- Մասնագիտական թեմատիկ դասընթացներ (ինչպես, օրինակ, Վերածննդի շրջանի քննադատություն, Վանի թագավորության արվեստ, Երուսաղեմյան ավանդույթները հայ արվեստում, Անկախության շրջանի հայ արվեստը և այլն):

Մասնագիտական օժանդակ առարկաներ

- Աշխարհայացքների պատմություն I (Հին աշխարհի դիցաբանություն):
- Աշխարհայացքների պատմություն II (Համաշխարհային կրոններ):
- Աշխարհայացքների պատմություն III (Հումանիզմ, լուսավորչականություն, ռոմանտիզմ):
- Աշխարհայացքների պատմություն IV (Ռեալիզմից մինչև պոստմոդերնիզմ):

- Երաժշտագիտություն:
- Թատերագիտություն:
- Կինոգիտություն:
- Գրականագիտություն:
- Ազգագրություն և արվեստաբանություն:
- Անգլերեն (խորացված ուսուցում):
- Գրաբար (դասական հայերեն):
- Գծանկարչություն և երփնանկարչություն:
- Կոմպոզիցիա:

Հանրակրթական առարկաներ

- Հայոց լեզու և հայ գրականություն:
- Հայոց պատմություն:
- Փիլիսոփայություն:
- Ինֆորմատիկա:
- Քաղաքաշտպանություն:
- Բնապահպանության հիմունքներ:
- Ֆիզկուլտուրա:

Կամընտրական (optional) առարկաներ

- Երկրորդ օտար լեզու
(ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն):
- Ռուսաց լեզու և գրականություն:
- Արվեստ և մարդաբանություն:
- Արվեստի սոցիոլոգիա:
- Մշակութաբանություն:

Մագիստրոսական ծրագրի առարկայացանկն ըստ եռափուլ սկզբունքի

Առաջին փուլ

- Ժամանակակից արվեստաբանության խնդիրները:
- Հայաստանի ընթացիկ հնագիտական պեղումները:
- Հուշարձանների պահպանության խնդիրները
Հայաստանում:
- Հայագիտության ներածություն
(Արվեստաբանությունը հայագիտության
համատեքստում):
- Ժամանակակից արվեստի տեսություններ:
- Հետազոտության մեթոդներ:
- Ինֆորմատիկա. առցանց գիտական ռեսուրսների
օգտագործում:

Երկրորդ փուլ

- Արվեստագետներ և արվեստի միջավայր:
- Սփյուռքահայ արվեստի զարգացման ուղիները:
- Ժամանակակից արվեստը Հայաստանում:
- Միջնադարյան պատկերագրություն և
խորհրդաբանություն:
- Հայ եկեղեցիների տիպաբանություն:
- Էսթետիկա և արվեստաբանություն:

Երրորդ փուլ

- Հետազոտական գործնական դասընթաց
(Academic writing):
- Արվեստի հոգեբանություն:
- Արվեստի կառավարում:
- Արխիվային գործ:
- Թանգարանային գործ:

- Աղբյուրագիտություն և մատենագիտություն:
- Արվեստի լրագրություն և գրախոսություն:

Կամընտրական առարկաներ

- Ձեռագրագիտություն:
- Վիմագրական հետազոտություններ:
- Օտար լեզուներ (ըստ ընտրության):
- Գրաբար (դասական հայերեն):

SUMMARY

The New Higher Educational Programs in the Field of the Art History and Theory, Composed for the Bachelor and Master Degrees

Nazenie Garibian

PhD in Art History (Paris)

Senior Researcher at Matenadaran

The article presents the concept, methodology and syllabus of the new educational programs in Art History and Theory for the Bachelor and Master degrees, which are elaborated in 2013 and implemented since 2014 at the Department of Art history and theory at the State Academy of Fine Arts of Armenia. These programs represent an original work, created by Associate professors of the Academy of Fine Arts Nazenie Garibian and Vardan Azatyan. They meet the new Qualification requirements based on the Academic Credit System and the Criteria for Higher Education established by the national governmental institutions. The programs aim to adequately respond to the new challenges facing the preparation of highly qualified specialists and to ensure their competitiveness in the international labor market. During the elaboration of the programs the authors have taken into account the internationally recognized principles in the field of Art history and theory, the benchmarking of programs of various foreign universities, the personal experience of the lecturers of the Academy of Fine Arts, as well as their own international teaching experience.

Keywords: *Bachelor degree, Master degree, Professional Educational Program, Higher education, Academic Credit system, Art history and theory, Art critic.*

РЕЗЮМЕ

Новые образовательные программы бакалавриата и магистратуры, составленные по специальности “Искусствоведение” (“История и теория искусства”)

Назени Гарибян

Доктор искусствоведения (Париж)

Старший научный сотрудник Матенадарана

В статье представлены концепция, методология и учебный план новых образовательных программ по специальности “Искусствоведение” для степеней Бакалавра и Магистра, которые были разработаны в 2013 году и внедрены с 2014 года на Кафедре Истории и теории искусства Государственной академии художеств Армении. Эти авторские программы были созданы доцентами Академии

художеств Назени Гарибян и Варданом Азатяном. Они соответствуют новым Квалификационным требованиям, основанным на Кредитной образовательной системе, а также Критериям высшего образования, установленным государственными учреждениями. Программы нацелены на адекватное реагирование на новые вызовы, стоящие перед вопросом подготовки высококвалифицированных специалистов, а также на обеспечение их конкурентоспособности на международном рынке труда. При разработке программ авторы учли международно признанные принципы в сфере истории и теории искусства, бенчмаркинг программ различных зарубежных университетов, личный опыт преподавателей Академии художеств и свой собственный международный преподавательский опыт.

Ключевые слова: *бакалавриат, магистратура, профессиональная образовательная программа, искусствоведение, история и теория искусств.*